

H.M. HOVHANNISYAN, I.S. AVANESOWA

HUMAN ACTIVITIES AS THE MAIN CAUSE OF CLIMATE CHANGE

In nature, everything is interconnected. Even a small change in one component leads to changes in many others. In this regard, it is obvious that as the temperature on the planet increases, we can observe other related changes.

Despite climate changes such as the change of seasons, changes in ocean currents, volcanic activity, solar radiation, other climate events, etc., the climate is quite stable by nature, that is, these changes occur with a certain regularity, winter always gives way to spring, and monsoons come at a certain season.

Thus, climate change is a significant and long-term change in the statistical distribution of weather conditions, which can occur over a period of decades to millions of years. This can be a change in normal weather conditions, for example, a change in the dates of the rainy season in the tropics, or a change in the frequency of extreme weather events such as floods, droughts and storms. New dangerous infectious diseases and new pests appear where they have never been before. These and other consequences of climate change are dangerous for plants and animals, which are not able to quickly adapt to such drastic changes.

Fluctuations in the amount of sunlight and radiation called Milankovitch Cycles, are the most significant driver of climate change over the past thousands to millions of years. They were also the main cause of the last 4 cycles of glaciation and warming. However, over the past 150 years, the Earth's climate has changed significantly, and it is very important to understand what caused such dramatic changes in such a short period of time.

Let's consider what role the human activity has played in climate change over the past century.

Keywords: climate change, environmental damage, industrial emissions, carbon dioxide, global warming.

ՀՏԴ 338.24(479.25)

Ք.ՅՈՒ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀՀ տնտեսության ռազմավարական ծրագրերին նպաստող և խոչընդոտող գործոնները և դրանց արդյունքները հետազայում կարող են օգտակար լինել պետական կառավարման տարբեր մարմիններին՝ ռազմավարական պլանավորմանն առնչվող արդյունավետ որոշումներ ընդունելու համար:

Դիտարկվել է փորձագիտական գնահատման մեթոդ, որի արդյունքում առանձնացվել են տնտեսության զարգացմանը նպաստող գերակայությունները՝ առաջարկելով ներդնել ռազմավարական պլանավորման հայեցակարգ:

Առանցքային բաներ. ռազմավարական կառավարում, որոշիչ թվերի օրենք, փորձագիտական մեթոդ, SWOT վերլուծություն, տարածաշրջանային ինտեգրում:

ՀՀ սոցիալ-տնտեսական իրողությունները գնահատելիս չի կարելի հաշվի չառնել նաև սրընթաց վերափոխվող աշխարհի մարտահրավերները, որոնք պետք է իմաստավորվեն ամբողջության մեջ [1]:

Ռազմավարական պլանավորման գործընթացում առավել ընդունված է SWOT՝ ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծությունը, որի նպատակն է բացահայտել այն գլխավոր գործոնները, որոնք կարող են ազդել տնտեսության և դրա առանձին ճյուղերի զարգացման վրա [2]:

SWOT վերլուծությունը, առաջին հերթին, անհրաժեշտ է կիրառել տնտեսական քաղաքականության ցանկացած բնագավառում որոշում կայացնելու և պարզելու համար, թե որն է տվյալ նախաձեռնությանը հետամուտ լինելու լավագույն ճանապարհը: Ընդ որում, ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը կարող է բացահայտել տնտեսության զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև առանձին ճյուղերի և ենթաճյուղերի ընդարձակման հնարավորությունները: Բացի այդ, SWOT վերլուծության հիման վրա կարելի է անգամ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մեջ անհրաժեշտ շտկումներ կատարել և դրանք կատարելագործել:

Իրականացնելով ՀՀ տնտեսությունում SWOT վերլուծություն՝ սույն հետազոտության շրջանակներում հիմնավորվել են ՀՀ տնտեսության զարգացմանը սպառնացող բոլոր վտանգներն ու հնարավորություններն արտաքին միջավայրում, ինչպես նաև մակրո և միկրո մակարդակներում գործող սուբյեկտների առավելություններն ու խոցելի կողմերը (աղ.)[3]:

Աղյուսակ

ՀՀ տնտեսության SWOT վերլուծության համառոտ բնութագիրը *

<u>Ուժեղ կողմեր / առավելություններ</u>	<u>Թույլ / խոցելի կողմեր</u>
<p>մարդկային ռեսուրսներ /որակյալ աշխատուժ/, մտավոր ներուժ, Սիյուռքի մասնագիտական ներուժ, ժողովրդավարական ինստիտուտների կայացում, կայացած բանկային համակարգ, մրցունակ և ինքնաբավ էներգետիկ համակարգ, ազատ մրցակցային դաշտ, մասնավոր ձեռներեցության զարգացում, առանձին ճյուղերում առաջանցիկ աճ /SS, գրոսաշրջություն, ոսկերչություն/, ինտերնետ հասանելիության և մատչելիության բարձր մակարդակ:</p>	<p>ներդրումների ծավալների անկումը, արտահանման համեմատ ներմուծման եռապատիկ ծավալներ, արտահանման կախվածություն՝ հանքարդյունաբերությունից, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ, հարկային, մաքսային վարչարարության ցածր արդյունավետություն, տնտեսության մրցունակության ցածր մակարդակ, վերամշակող արդյունաբերության ցածր տեսակարար կշիռ, արժեթղթերի շուկայի փաստացի անգործություն, բանկային տոկոսադրույքների բարձր մակարդակ, համայնքների խիստ անհամաչափ զարգացում, գործազրկության բարձր մակարդակ, հատկապես՝ երիտասարդների շրջանում, սահմանափակ ներքին շուկա:</p>


<u>Հնարավորություններ</u>	<u>Սպառնալիքներ / վրանգներ</u>
<p>միջազգային կառույցներին անդամակցություն /ԱՀԿ, ՀԲ, ԱՄՀ/, արտաքին առևտրի բարենպաստ պայմաններ /ՄՄ/, տարածաշրջանային ինտեգրման, գործընթացները /ԵՄ Արևելյան գործընկերության ծրագիր, ՄՄ, ՄԾՏՀ/, արտերկրի հետ կայուն գործընկերային կապեր, համաշխարհային տնտեսության միջինի համեմատ բարձր տնտեսականական աճի տեմպեր, արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացման ռազմավարություն, պետություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված գործուն համագործակցություն /առաջարկ/:</p>	<p>աղքատության բարձր մակարդակ, գնաճ, արտագաղթ՝ հատկապես երիտասարդ և բանիմաց մասնագետների, բնակչության ծերացում, ցածր վճարունակություն, ստվերային տնտեսություն, կոռուպցիա, մենաշնորհներ, արտաքին հաղորդակցությունների սահմանափակումներ և շրջափակում, ներդրումային կախվածություն՝ սահմանափակ թվով երկրներից, արտաքին քաղաքական անկայունություն, ուրբանիզացիայի բարձր մակարդակ:</p>

*Աղյուսակը վերլուծվել է հեղինակի կողմից:

Տնտեսական միջավայրի ցուցանիշների և դրանց կառուցվածքը բնորոշող գործոնների վերլուծությունից կարող ենք հիմնավորել, որ SWOT մեթոդի կիրառման արդյունքում ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ, որոնց նպատակները հստակ սահմանված կլինեն ռազմավարական պլանավորման գործընթացում՝ նվազեցնելով և կանխելով տնտեսության զարգացման ներքին և արտաքին սպառնալիքները (աղ):

Ռազմավարական պլանավորման հայեցակարգում ներկայացնելով տնտեսության թիրախային ոլորտները, արտաքին գործոնների նկատմամբ դրանց զգայնությունը՝ կառավարման տարբեր մակարդակներում տրված գնահատականները կարող են համարվել հուսալի, արժանահավատ և հետագայում նախադրյալներ ստեղծել տնտեսության զարգացման համար (նկ. 1):

ՀՀ տնտեսության զարգացման գործում առաջարկվում է իրականացնել ռազմավարական պլանավորման համակարգային գնահատում (նկ.1), որի օգնությամբ ՀՀ կառավարման տարբեր մարմիններին հնարավորություն կընձեռվի՝ մշակելու տնտեսության զարգացման ռազմավարություն՝ հստակ պատկերացում ունենալով գերակա նպատակների և դրանց իրականացման խնդիրների վերաբերյալ:



Նկ. 1. Ռազմավարական պլանավորման համակարգային գնահատման մեթոդ [5]

Ներկայացվել է որակական գնահատման մեթոդ՝ ըստ փորձագիտական գնահատականի [5] (Y փաստացի ցուցանիշ): Ըստ այդմ, (P_i) նշանակությունը որոշվում է 5 սանդղականոց միավորների արդյունքում՝ [$P_{max} - P_{min}$] միջակայքում.

$Y = 5$ միավոր $\Rightarrow P_i = P_{max}$ (կատարյալ նշանակություն)


$Y = 4$ միավոր $\Rightarrow P_i = P_4$ (լավ նշանակություն)

$Y = 3$ միավոր $\Rightarrow P_i = P_3$ (բավարար նշանակություն)

$Y = 2$ միավոր $\Rightarrow P_i = P_2$ (վատ նշանակություն)

$Y = 1$ միավոր $\Rightarrow P_i = P_{min}$ (ոչ օգտակար նշանակություն)

Նկ. 2-ում ներկայացված են որոշիչ օրենքի թվային հաշվարկներ, որոնց հիմքը տնտեսության զարգացումը պայմանավորող փաստացի ցուցանիշներն են:



Նկ. 2. Որոշիչ օրենքի օրինակ [3]

Հարց է առաջանում՝ «Ինչպե՞ս է որոշվում ընտրված փաստացի ցուցանիշների նշանակությունը, որոնք էական ազդեցություն են ունենում տնտեսության զարգացման համար»: Հետագայում դրանց արդյունքներն ընտրվում են որպես ռազմավարական պլանավորման գերակա նպատակներ:

Հաշվարկման արդյունքում ընտրվել է 2 թիվը: Փորձագիտական եղանակով մատրիցի գնահատման արդյունքում դիտարկվել են 3 և 2 փաստացի ցուցանիշների նշանակությունը, որոնց լուծման արդյունքում ընտրվել է 2-ը (նկ. 2 -ի 1-ին մատրից):

Ընտրված 2-ը դիտարկվել է 3-ի հետ, որոնց համադրման արդյունքում ընտրվել է 3-ը (նկ. 2-ի 2-րդ մատրից): Որպես փաստացի ցուցանիշի նշանակալի ազդեցություն 1-ին և 2-րդ մատրիցների համադրման արդյունքում փորձագիտական եղանակով ընտրվել է 2-ը, որն ունի վատ ազդեցություն տնտեսության զարգացման վրա:

Որոշիչ օրենքի հիման վրա ներկայացված մատրիցների թվերի փոխարեն կարող են լինել.

1. տնտեսության վիճակը բնորոշող ցուցանիշներ,
2. բնակչության կենսամակարդակը բնորոշող ցուցանիշներ,
3. տնտեսական ներուժը բնորոշող ցուցանիշներ,
4. սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը բնորոշող ցուցանիշներ,

5. տնտեսության ապրանքաշրջանառության ծավալները բնորոշող ցուցանիշներ:

Թվարկված 5 ցուցանիշներն իրենց հերթին կարող են բնորոշվել առանձին վերցրած կառուցվածքներում: Օրինակ՝ կենսամակարդակը բնորոշող ցուցանիշները հանդես են գալիս հետևյալ կառուցվածքով՝

- բնակչության դրամական եկամուտներ,
- սոցիալական ապահովվածություն և սոցիալական զարգացում,
- ժողովրդագրություն և առողջապահություն,
- կրթություն,
- մշակույթ, սպորտ և շրջակա միջավայր,
- տնտեսական և ազգային անվատանգություն:

Ներկայացված կառուցվածքը գնահատվում է տարիների կտրվածքով, և հիմնավորվում են յուրաքանչյուրի վրա ազդող գործոնները: Ըստ այդմ, օրինակ, մշակվում է կրթության զարգացման ռազմավարություն՝ հիմք ընդունելով ժողովրդագրությունը, բնակչության եկամուտների մակարդակը և այլ գործոններ:

Տնտեսական ներուժը բնութագրող ցուցանիշները հանդես են գալիս հետևյալ կառուցվածքով՝

- ՀՆԱ,
- գիտություն և արդյունաբերություն,
- փոքր և միջին բիզնես,
- տրանսպորտ և կապ,
- մանրամեծածախ առևտուր,
- բնակչության և գործարար միջավայրի վարկային և ֆինանսական կախվածություն,
- զբոսաշրջության զարգացում,
- տնտեսության ինտեգրում տարածաշրջանային երկրների տնտեսություններին:

Սոցիալ-տնտեսական զարգացումը բնորոշող ցուցանիշներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

- աշխատանքային ռեսուրսներ,
- ինովացիոն գործընթացների աջակցություն,
- շինարարություն և ճարտարաշինարարական ենթակառուցվածքներ,
- բյուջետային համակարգի կատարելագործում,
- միջազգային և արտաքին տնտեսական գործունեություն:

Այսպիսով՝ SWOT, համակարգային և փորձագիտական մեթոդներով վերլուծությունների միջոցով հնարավոր է բացահայտել ՀՀ տնտեսության զարգացման

ուղղությունը և դրա ներուժը՝ ներքին և արտաքին գործոնների համեմատական գնահատման արդյունքում:

Եզրակացություն: ՀՀ տնտեսության ռազմավարական կառավարման գերակայությունները վերլուծելով՝ ստացված արդյունքները կարող են նպաստել հանրապետությունում միկրո և մակրոմակարդակներում մրցունակության բարձրացմանը, եթե պատշաճ ձևով դիտարկվեն երկրում ձևավորված և գործող տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ ենթակառուցվածքները, ինչպես նաև վերհանվեն դրանցում առկա հիմնախնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Սարգսյան Հ.** ՀՀ սոցիալ-տնտեսական վերելքի ռազմավարությունը / Հայաստան 2020. Զարգացման և անվտանգության ռազմավարություն.- Ե.: Տիգրան Մեծ, 2003.- էջ 229-234:
2. **Морозова Т.Г., Пикулькина А.В.** Прогнозирование и планирование в условиях рынка: Учеб. пособие для вузов. -2-е изд., перераб. и доп. - М., 2003.- 258 с.
3. **Пашенко Ф.Ф., Гусев В.Б., Павельев В.В.** Развитие мегаполиса: программно-целевые методы и индикативный подход // Технополис.- 2007.- №1.- С. 14-17.
4. **Bordo M., Eichengreen B., Klingebiel D., Martinez-Peria M.** Is the crisis Problem Growing More Severe // Economic Policy. -2001. - 16(32). - P. 51-82.
5. **Conway M.** Scenario Planning: An Innovative Approach to Strategy Development.- Swinburne University of Technology, 2004. -P.45-46, 48-49.

Կ.Յ. ԲԱԳԴԱՏԱՐՅԱՆ

Կ ВОПРОСУ О СТРАТЕГИЧЕСКОМ УПРАВЛЕНИИ ЭКОНОМИКОЙ РА

Факторы, способствующие и препятствующие стратегическим планам экономики РА, и их результаты в дальнейшем могут быть полезны различным органам государственного управления для принятия эффективных решений, связанных со стратегическим планированием.

Рассмотрен метод экспертной оценки, в результате которого были выявлены приоритеты, способствующие развитию экономики, с предложением внедрить концепцию стратегического планирования.

Ключевые слова: стратегическое управление, закон принятия решений, экспертный метод, SWOT-анализ, региональная интеграция.

K.YU. BAGHDASARYAN

THE ISSUE OF STRATEGIC MANAGEMENT OF THE RA ECONOMY

The factors, supporting and hindering the strategic plans of the RA economy, and their results can later be useful to various public administration bodies to make effective decisions related to strategic planning.

The article considers an expert evaluation method, as a result of which the priorities contributing to the development of the economy are identified, proposing to implement the strategic planning concept.

Keywords: strategic management, law of decision-making power, expert method, SWOT analysis, regional integration.

ՀՏԴ 330.55:31(479.25)

Գ.Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Ռ.Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՀՀ ՀՆԱ-Ի ՇԱՐԺԸՆԹԱՅԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԽԱՌՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՔ

Ուսումնասիրվել է ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, մանրածախ առևտրի և ծառայությունների միջոցով արտադրված արտադրանքների/ծառայությունների ծավալների շարժընթացը՝ որպես համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկման հիմք, փաստացի վիճակագրական տեղեկատվության հիման վրա հաշվարկվել են նաև բոլոր նշված ցուցանիշները համադրելի գներով:

Առանցքային բառեր. ՀՆԱ, տնտեսության հիմնական ճյուղեր, սպառողական գների ինդեքս, շարժընթաց:

Ներածություն: Հայտնի է, որ աշխարհի բոլոր երկրներում որպես կարևորագույն առանցքային ցուցանիշ հաշվարկվում է ՀՆԱ-ն, ինչը բնութագրում է սովյալ երկրի բնակչության բարեկեցության մակարդակը: Հատկապես շատ կարևոր է ՀՆԱ-ի հաշվարկը բնակչության մեկ շնչի հաշվով: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, մանրածախ առևտրի և ծառայությունների միջոցով արտադրված արտադրանքների/ծառայությունների ծավալների շարժընթացը՝ որպես համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկման հիմք: Ելնելով նպատակից՝ դրվել են հետևյալ խնդիրները. Հավաքագրել փաստացի վիճակագրական տվյալներ ՀՀ ՀՆԱ-ի և սպառողական գների շարժընթացի վերաբերյալ 2012-2023 թթ. ընկած ժամանակահատվածում,